

UPTON

OUR PARISH



VOL VI

AUGUST 1988

No. 8 (68)

Registered by Australia Post No. NAR 5735

Փոնգտացողը շուրջը կը ցայտեցնէ մի քանի
հազար մասնիկներ, իւրաքանչիւրը հեղուկ պարու-
նակով մը շրջապատուած: Մասաչուսեցի ինսթիթիւթ
ավ թեքնոլոցիէն քանի մը գիտնականներ անգամ մը
փոնգտացողները ելեկտրոշանթակազմով լուսանկարած
ու ստուգած են, թէ փոնգտուքի կաթիլները ժամական
166.7 քիլոմեթր արագութեամբ կը սուրան օդին մէ-
ջէն եւ փոնգտացողէն մինչեւ 3.5 մեթր հեռու կը
հասնին: Քանի մը մասնիկներ իսկոյն գետին կ'իյ-
նան, միւսները շփելով օդին մէջ կը յածին:

Երբ փոնգտացողը վարակիչ մանրէներ ունեցող
մէկն է, շուրջը գտնուող անձերը վարակուելու
կենթարկուին: Ու երբ մէկը քալելու ատեն առանց
քիթին դէմ թաշկինակ մը բռնելու փոնգտայ՝ վնաս
կը պատճառէ մօտէն քալող պատահական անցորդներուն,
որոնք կրնան պաղարութենէ տառապիլ: 1918ի
Սպանեոլ՝ կոչուած կրիքի համաճարակը եւ Միջին
Դարու ժանտախտը փոնգտուքի հետեւանքով վարակուած
միլիոնաւոր զոհեր խլած են մարդկութենէն:

․․․․․

Ով որ փոնգտուքը արգիլել փորձէ, անոր կամ
քիթը կ'արիւնի եւ կամ քիթին ու անոր շրջապատին
ոսկրիկները կը կտորեն: Եթէ փորձէք ձեր քթածա-
կերը գոցել, այն ատեն ալ հաւանական է որ մանրէ-
ները ճակատին կամ կամ անոր քովնտի խոռոչները
վարակեն: Աւելի յոռեզոյնը, ձեր ականջի միջին
մասին մէջ գտնուող ոսկրիկներէն մէկը խախտեն եւ
ասանկով լսողութեան վնասեն: Պզտիկ միթարութիւն
մը. - նման պատահար մը խիստ հազուադէպօրէն տեղի
կ'ունենայ: Ամէն պարագայի՝ ժամանակակից այն
բարեկիրթ քաղաքացիները, որոնք մեղմօրէն սեղմելով
իրենց քիթը՝ ՄՓՖ՝ ձայն մը արտաբերելով կը փը-
որնգտան, աւելի լաւ կ'ընեն եթէ բնութեան պահան-
ջին կամայ-ակամայ զոհացում տան, առանց նկատի
առնելու արտաբերուած քշիկ մը կոշտ ձայնը:

․․․․․

Փոնգտալու ատեն մարդ չի կրնար տեսնել ը-
րածը, քանի որ այդ պահուն կը գոցէ աչքերը:

Անգլիոյ մէջ, ասկէ հարիւր տարի առաջ, իւրե-
քայ ու անպարար մարդիկ օտարականի մը հետ խօսքի
թոնուելու պահուն անոր երեսին փոնգտափոշի կը ցա-
նէին, որուն հետեւանքով կը պարպէին անոր զրպան-
ները:

ՀԱՍԱՄ - Չի: Առողջութիւն:

Donations to the school:

Armenian Relief Society	200
Mr & Mrs J ARSLANIAN	1000
Miss A. ATAMIAN	100
Mr & Mrs M. MANOUKIAN	1000
Mr & Mrs SHARSHAFIAN	500
Mr Y. WAZIR	1000

Donations to the church:

Mr & Mrs P. CHANAKIAN	50
Mr & Mrs J. HELOU	50

Donations to the bulletin:

Mr I. ASSADOURIAN	20
Mr & Mrs J. BAYNDRIAN	20
Mrs. A. TOROSSIAN	20